ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81

N 622
09 օգոստոս 2022թ.

«ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ս. ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Քաջարանի համայնքապետարանի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊ ընկերության միջև 2022 թվականի մարտի 01-ին կնքվել է ՔՀ-ԳՀԱՇՁԲ-22/04-02 ծածկագրով «Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ Քաջարան քաղաքի Շահումյան փողոցում խաղահրապարակի վերակառուցման աշխատանքների» ձեռքբերման պայմանագիր:

ՔՀ-ԳՀԱՇՁԲ-22/04-02 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված թիվ 2-ի (Օրացուցային գրաֆիկ) համաձայն՝ կապալառուն պարտավորվել է կատարել աշխատանքները 4 /չորս/ ամիսների ընթացքում՝ մինչև ս/թ հուլիսի 1-ը ներառյալ:

Պայմանագրի 3.1.4 կետի ա) և բ) ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Քաջարան քաղաքի Շահումյան փողոցում խաղահրապարակի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող «Մարտեվ» ՍՊ ընկերության տնօրեն Ժ. Բաբայանի 08/08/2022 թվականի Քաջարան համայնքի ղեկավարին ուղղված գրությունը աշխատանքի կատարման էական խախտումների վերաբերյալ՝ Քաջարանի համայնքապետարանը ս/թ օգոստոսի 09-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 3 447 000 (երեք միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ և 2 298 000 (երկու միլիոն երկու հարյուր իննսունութ հազար)

ՀՀ դրամ Քաջարանի համայնքապետարանի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գարձապետական հաշվարկային հաշիվ՝ 900315202151 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Քաջարանի համայնքապետարանը նաև նախաձեռնում է «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Քաջարանի համայնքապետարանի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գարձապետական հաշվարկային հաշիվ՝ 900315202151 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.2 (*Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով*) և 6.3 (*3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով*) կետերով սահմանված տույժը և տուգանքը, որոնց չափերը 08/08/2022թ.-ի դրությամբ կազմում են համապատասխանաբար 261 477 (երկու հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ և 114 900 (մեկ հարյուր տասնչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված կարգով՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը կհրապարակվի gnumner.am կայքում:

Կից ներկայացնում ենք տեխնիկական հսկողություն իրականացնող «Մարտեվ» ՍՊ ընկերության տնօրեն Ժ. Բաբայանի՝ Քաջարան համայնքի ղեկավարին ուղղված գրությունը:

Առդիր՝ 1 /մեկ/ թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսական, եկամուտների հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Աբելյան
/հեռ. 093-789-769/